

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՎԵՋԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՍՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Ազգիս վեհափառ Հայրապետը նոր տարուայ առիթով
ստացել է Պարսից Շահից հետևեալ շնորհաւորական հեռագիրը.

ԷՋՄԻԱԾԻՆ նորին սրբութիւն՝ կաթողիկոսին.

Նոր տարուայ օրի առիթիւ յայտնում եմ Ձեր սրբութեան
քով սրտագին ցանկութիւններն ու բարեմաղթութիւնները:

ՄՈՒԶԱՖԷՐ ԷԴԴԻՆ:

Նորին օծութիւնը յայտնել է իւր շնորհակալութիւնը
հետևեալ հեռագրով.

ԹԵՏՐԱՆՆԻ Ն. Մ. ՄՈՒԶԱՖԷՐ ԷԴԴԻՆ ՇԱՀՆՇԱՀԻՆ.

Իորապէս զգացուած Ձեր մեծութեան արտայայտուած
ցանկութեանց և բարեմաղթութեանց համար նոր տարուայ
առիթով, յայտնում եմ ՚մ, բոլոր հոգևորականութեանս և ամ-
բողջ Հայ ազգի կողմից անկեղծ շնորհակալութիւն: Աղօթում եմ
Ձեր Մեծութեան և համայն արքայական ծան առողջութեան
և Մեծ Իրանի փառքի ու բարօրութեան համար:

Ծայրագոյն Պատրիարք և կաթողիկոս ամենայն Հայոց
ՄԿՐՏԻՉ:

ՎԵՋ. կաթողիկոսի անուանակոչութեան տօնը, ըստ սո-
վորութեան մեծ հանդիսով կատարուեցաւ Ս. Էջմիածին և ամ-
ենն հայարնակ տեղերում: Նորին Սրբութիւնն այդ առիթով
ստացել է մի քանի հարիւր շնորհաւորական հեռագիրներ աշ-
խարհի ամեն ծայրերից, ի թիւս որոց և Կիլիկիոյ Ամեն. Տ. Սա-
հակ կաթողիկոսից, Երուսաղէմի և Կ. Պօլսի ամեն. Պատ-
րիարքներից, բոլոր հայ դպրոցական հաստատութիւններից, հո-
գևորականներից, հաստատութիւններից, բարձրաստիճան անձե-
րից, հասարակութիւններից, ուսանողական խմբերից, տիկին-
ների, օրիորդների, արհեստաւորների և այլ խմբերից, անհատ-
աներից և այլն: